ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

----------------------------------------------------------------

*Կ Ի Ն Ե Զ Ի Ո Լ Ո Գ Ի Ա Յ Ի   Ա Մ Բ Ի Ո Ն*

# *Բ Ա Կ Ա Լ Ա Վ Ր Ի Ա Տ Ի*
# *Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր*

*ԱՌԱՐԿԱ* — *ՄԵՐՍՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ*

*ՖԱԿՈՒԼՏԵՏ* — *ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ*

*ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ* — *ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ*

*ԿՈՒՐՍ* — *II*

***Ե Ր Ե Վ Ա Ն 2014***

ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼ Է՝ Մ. Գ. Թ., ԴՈՑԵՆՏ՝ Ա.Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱՅԻ
ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁԱՆ. ԹԻՎ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁԱՆ. ԹԻՎ

## *ԲԱՑԱՏՐԱԳԻՐ*

Մերսումը բժշկագիտության ինքնուրույն ճյուղերից մեկն է, որը հիմք է հանդիսանում մարդու առողջության պահպանման, աշխատունակության բարձրացման և հիվանդությունների կանխարգելման ու բուժման համար: Այն իրենից ներկայացնում է մարդու մարմնի մակերեսի տարբեր հատվածների վրա հատուկ հնարքների տարբերակված մեխանիկական և ջերմային ազդեցություն:

Ծրագիրը կազմված է մարզաառողջարարական ֆակուլտետի կինեզիոլոգիայի բաժնի ուսանողների համար:

Ուսումնական ծրագիրը նախատեսում է՝

- քննարկել մերսման ֆիզիոլոգիական ազդեցության մեխանիզմները;
- դասական մերսման հնարքների ազդեցության ուսումնասիրությունը;
- մերսման սեանսի մեթոդիկայի կազմումը;
- մերսման մեթոդիկան տարբեր հիվանդությունների և վնասվածքների դեպքում:

Ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես տեսական, այնպես էլ մեթոդական պարապմունքներից, նաև ուսանողների անհատական աշխատանքներից:

Տեսական նյութը մատուցվում է ըստ ծրագրում նախատեսված թեմաների:

Մեթոդական պարապմունքների ժամանակ ուսանողները սովորում են կազմել մերսման սեանսի մեթոդիկա՝ հաշվի առնելով մերսվողի տարիքը, սեռը, օրգանիզմի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հիվանդության բուժման հիմնական խնդիրները:

Մեթոդական պարապմունքները հիմնականում անցկացվում են յուրահատուկ կահավորված սենյակում:

Սեմինար պարապմունքների ժամանակ ստուգվում են դասախոսությունների և մեթոդական պարապմունքների ընթացքում ձեռք բերված գիտելիքները:

Դասընթացը նախատեսված է 2 կիսամյակի համար՝ 128 ժամ լսարանային պարապմունքների համար, որոնցից 64 ժամ /յուրաքանչյուր կիսամյակում 32 ժամ/՝ դասախոսություններ, 64 ժամ /յուրաքանչյուր կիսամյակում 32 ժամ/՝ գործնական և սեմինար պարապմունքներ:

Գիտելիքների ստուգման հանրագումարային ձևը. I և II կիսամյակում՝ միջանկյալ և ամփոփիչ քննություն 4/4 կրեդիտ:

*ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ*

*I կիսամյակ*

*Դասախոսություն 32*
*Գործնական 32*
*Անհատական աշխատ.12*
*Ինքնուրույն աշխատ. 44*

| Թիվ | Թեմա | Դասախոսություն | Գործնական | Սեմինար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Թեմա 1.** Ներածություն<br>**1.1.** Մերսումը որպես գիտություն, զարգացման պատմությունը:<br>**1.2.** Մերսման առարկան, նպատակը և խնդիրները | 4 | 2 | 2 | 8 |
| 2 | **Թեմա 2.** Մերսման տեսության մեջ և պրակտիկայում կիրառվող տերմինները | 4 | 2 | 2 | 8 |
| 3 | **Թեմա 3.** Մերսման դասակարգումը<br>**3.1.**Մարզական և բուժական մերսում<br>**3.2.**Հիգիենիկ և կոսմետիկական մերսում | 4 | 2 | 2 | 8 |
| 4 | **Թեմա 4.** Մերսման համակարգերը<br>**4.1.** Դասական, շվեդական և ֆիննական համակարգեր<br>**4.2.** Սեգմենտար, կետային և պերիոստալ համակարգեր | 4 | 2 | 2 | 8 |
| 5 | **Թեմա 5.** Մերսման ֆիզիոլոգիական ներգործությունը օրգանիզմի վրա<br>**5.1.** Մերսման ֆիզիոլոգիական ներգործության ուղիները՝ մեխանիկական, հումորալ, նյարդառեֆլեկտոր | 4 | 2 | 2 | 8 |
| 6 | **Թեմա 6.** Մերսման հիգիենիկ հիմունքները<br>**6.1.** Մերսման պայմաններն ու անհրաժեշտ միջոցները<br>**6.2.** Մերսողին և մերսվողին ներկայացվող պահանջները<br>**6.3.** Մերսման ճշտությունն ապահովող պայմանները, հակացուցումները | 4 | 2 | 2 | 8 |
| 7 | **Թեմա 7.**<br>Մերսման տարատեսակները և կատարման տեխնիկան:<br>7.1. Ճիշտ ֆիզիոլոգիական դիրքերը մասնակի մերսման ժամանակ: | 4 | 2 | 2 | 8 |
| 8. | **Թեմա 8.**<br>Մերսման հիմնական հնարքները, ցուցումները և հակացուցումները | 4 | 2 | 2 | 8 |
| *Ընդամենը՝* | | *32* | *16* | *16* | *64* |

*ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԹԵՄԱՆԵՐԻ ԵՎ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ*
*II կիսամյակ*

*Դասախոսություն 32*
*Գործնական 32*
*Անհատական աշխատ.12*
*Ինքնուրույն աշխատ. 44*

| Թիվ | Թեմա | Դասախոսություն | Գործնական | Սեմինար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | **Թեմա 9.** Մերսման ձևերը /ընդհանուր, մասնակի և զույգերով/ | 8 | 2 | | 10 |
| 2 | **Թեմա 10.** Մերսման մեթոդները /ձեռքով, ոտքով և սարքերով /գործիքներով/, կոմբինացված/ | 8 | 2 | 2 | 12 |
| 3 | **Թեմա 11.** Մերսման հնարքների դասակարգումը<br>11.1. Մերսման հնարքների կատարման ընդհանուր սկզբունքները<br>11.2. Հիմնական հնարքների համառոտ բնութագիրը | 10 | 2 | 2 | 14 |
| 4 | **Թեմա 12.** Մերսման հնարքների կատարման տեխնիկան և մեթոդիկան | 6 | 2 | 2 | 10 |
| 5 | **Թեմա 13.** Շփում | | 2 | | 2 |
| 6 | **Թեմա 14.** Տրորում | | 2 | | 2 |
| 7 | **Թեմա 15.** Ճմլում | | 4 | | 4 |
| 8 | **Թեմա 16.** Թրթռում | | 4 | | 4 |
| 9 | **Թեմա 17.** Հարվածող հնարքներ | | 2 | | 2 |
| 10 | **Թեմա 18.** Ցնցում, թափահարում | | 2 | | 2 |
| 11 | **Թեմա 19.** Շարժումներ /պասիվ և ակտիվ/ | | 2 | | 2 |
| Ընդամենը | | 32 | 26 | 6 | 64 |

## ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Թեմա 1.** Ներածություն (8 ժամ)

1.1. Մերսումը որպես գիտություն, զարգացման պատմությունը:

1.2. Մերսման առարկան, նպատակը և խնդիրները

**Թեմա 2.** Մերսման տեսության մեջ և պրակտիկայում կիրառվող տերմինները (8 ժամ)

Մերսման տեսության մեջ և պրակտիկայում, հատկապես մերսման հնարքները նկարագրելիս, օգտագործվում է հատուկ տերմինաբանություն: Մերսման ոլորտում

**Թեմա 3.** Մերսման դասակարգումը (8 ժամ)

Մերսման դասակարգումը՝ մարզական, բուժական, հիգիենիկ և կոսմետիկական մերսում: Մարզական մերսման նպատակը, կիրառման առանձնահատկությունները տարբեր մարզաձևերում:

Բուժական մերսման առանձնահատկությունները, դասակարգումն ըստ հիվանդությունների:

Հիգիենիկ մերսման կիրառումը մարդու առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման գործում: Հիգիենիկ մերսումը որպես աշխատունակությունը պահպանող միջոց:

Կոսմետիկական մերսման կիրառումը մարմնի տարբեր հատվածների /պարանոց, ձեռքեր, դեմք և այլն/ մաշկի վիճակը բարելավելու նպատակով:

**Թեմա 4.** Մերսման համակարգերը (8 ժամ)

Դասական, շվեդական, ֆիննական, արևելյան համակարգերի, սեգմենտար և կետային մերսումների համառոտ բնութագիրը: Մերսման յուրաքանչյուր համակարգ մյուսներից տարբերվում է որոշակի հնարքների և դրանց մեթոդիկայի կիրառմամբ՝ կախված առաջադրված խնդրից:

**Թեմա 5.** Մերսման ֆիզիոլոգիական ներգործությունը օրգանիզմի վրա (8 ժամ)

Մերսման ազդեցությունը մաշկի, նյարդային, մկանային, արյունատար, ավշային, մարսողական համակարգերի վրա: Մերսման ազդեցությունը ոսկրային և հոդակապանային ապարատի, նյութափոխանակության վրա: Մերսման կիրառումը մկանների աշխատունակության պահպանման, վնասվածքներից և հիվանդություններից հետո վերականգնողական նպատակով:

Մերսման ֆիզիոլոգիական ներգործության ուղիները՝ մեխանիկական, հումորալ, նյարդառեֆլեկտոր:

**Թեմա 6.** Մերսման հիգիենիկ հիմունքները (8 ժամ)

Մերսման սենյակի և կահավորանքի հիգիենիկ պահանջները /լուսավորություն, օդափոխություն, օդի ջերմաստիճան և այլն/: Մերսողին և մերսվողին ներկայացվող պահանջները: Մերսողի աշխատանքային ռեժիմը: Մերսման ճշտությունն ապահովող պայմանները, ցուցումներն ու հակացուցումները:

**Թեմա 7.** Մերսման ձևերը (8 ժամ):

Մերսման ձևերը՝ ընդհանուր, մասնակի, զույգերով: Ընդհանուր, մասնակի և զույգերով մերսման ժամանակ կիրառվող հնարքների հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, մարմնի մերսվող հատվածների հերթականությունը, մեթոդական ցուցումներ:

**Թեմա 8.** Մերսման հիմնական հնարքները, ցուցումները և հակացուցումները (8 ժամ):

Մերսման մեթոդները՝ ձեռքով, ոտքով, գործիքներով /սարքերով/, կոմբինացված:

Ձեռքով մերսման հնարքների ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա, կատարման տեխնիկան և մեթոդիկան: Ձեռքով մերսման մեթոդի առավելությունը մյուսների նկատմամբ:

Ոտքով մերսման հնարքների ազդեցությունը օրգանիզմի վրա, կատարման տեխնիկան ու մեթոդիկան, ոտքով մերսման մեթոդի առանձնահատկությունները:

Գործիքներով /սարքերով/ մերսման առանձնահատկությունները, անցկացման տեխնիկան ու մեթոդիկան: Գործիքներով /սարքերով/ մերսման եղանակները՝ թրթռամերսում, պնևմոմերսում, բարոմերսում:

Կոմբինացված մերսման մեթոդի առանձնահատկությունները և առավելությունները:

**Թեմա 9.** Մերսման ձևերը (10 ժամ)

**Թեմա 10.** Մերսման մեթոդները (12 ժամ)

**Թեմա 11.** Մերսման հնարքների դասակարգումը (14 ժամ)

**Թեմա 12.** Մերսման հնարքների կատարման տեխնիկան և մեթոդիկան (10 ժամ)

**Թեմա 13.** Շփում (2 ժամ)

**Թեմա 14.** Տրորում (2 ժամ)

**Թեմա 15.** Ճմլում (4 ժամ)

**Թեմա 16.** Թրթռում (4 ժամ)

**Թեմա 17.** Հարվածող հնարքներ (2 ժամ)

**Թեմա 18.** Ցնցում, թափահարում (2 ժամ)

**Թեմա 19.** Շարժումներ ակտիվ և պասիվ (2 ժամ)

«Մերսման հիմունքներ» առարկայի ուսումնառության մոդուլային համակարգի պահանջները

Ա.Ա.Հ. ______________________________________________

| Մոդուլների հանձնման ժամկետները | Թեմաներ | Հաճախում 10 միավոր | Առարկայի յուրացում (գիտելիքներ, ունակություններ, հմտություններ /սեմ., ստ. աշխ. մշակում) 50 միավոր | Ուս.ակտի-վություն 15 միավոր | Ինքն. աշխ. 25 միավոր | Ստուգո-ղական աշխ. | Ստուգարք | Ստորագ-րություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| I մոդուլ մինչև 20 հոկտեմբեր | 1. Ներածություն: Մերսումը որպես գիտություն, զարգացման պատ-մությունը, առարկան, նպատակը և խնդիրները<br>2. Մերսման տեսության մեջ և պրակտիկայում կիրառվող տեր-մինները<br>3. Մերսման դասակարգումը. մարզա-կան, բուժական, հիգիենիկ և կոսմետիկական մերսում<br>4. Մերսման համակարգերը. դասական, շվեդական, ֆիննական, սեգմենտար, կետային և պերիո-ստալ | | | | | | | |
| II մոդուլ մինչև 10 դեկտեմբեր | 1. Մերսման ֆիզիոլոգիական ներ-գործությունը օրգանիզմի վրա. Ներգործության ուղիները` մեխա-նիկական, հումորալ, նյարդա-ռեֆլեկտոր<br>2. Մերսման հիգիենիկ հիմունքները: Մերսման պայմաններն ու անհրաժեշտ միջոցները: Մերսողին և մերսվողին ներկայացվող պահանջները: Մերսման ճշտությունն ապահովող պայմանները, հակացուցումները | | | | | | | |

Ծանոթացում

| | Ինքնուրույն աշխատանք 25 միավոր | Առարկայի յուրացում 50 միավոր | Ակտիվություն 15 միավոր |
|---|---|---|---|
| I մոդուլ | 15 միավոր | 30 միավոր | 7 միավոր |
| II մոդուլ | 10 միավոր | 20 միավոր | 8 միավոր |

Նշված պահանջները կատարելու դեպքում ինքնուրույն աշխատանքի հետ միասին «Մերսման հիմունքներ» առարկայից տրվում է 2 կրեդիտ

«Մերսման հիմունքներ» առարկայի ուսումնառության մոդուլային համակարգի պահանջները

Ա.Ա.Հ. ____________________________________________________

| Մոդուլների հանձնման ժամկետները | Թեմաներ | Հաճախում 10 միավոր | Առարկայի յուրացում (գիտելիքներ, ունակություններ, հմտություններ /սեմ., ստ. աշխ. մշակում) 50 միավոր | Ուս.ակտի-վություն 15 միավոր | Ինքն. աշխ. 25 միավոր | Ստուգո-ղական աշխ. | Քննություն | Ստորագ-րություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| I մոդուլ մինչև 20 մարտ | 1. Մերսման ձևերը /ընդհանուր, մասնակի և զույգերով/<br>2. Մերսման մեթոդները /ձեռքով, ոտքով և գործիքներով/<br>3. . Մերսման հնարքների դասակարգումը, համառոտ բնութագիրը և կատարման ընդհանուր սկզբունքները | | | | | | | |
| II մոդուլ մինչև 30 մայիս | 1. Շփում<br>2. Սեղմում<br>3. Տրորում<br>4. Ճմլում<br>5. Հարվածող հնարքներ<br>6. Ցնցող հնարքներ, թրթռում<br>7. Շարժումներ | | | | | | | |

Ծանոթացում

| | Ինքնուրույն աշխատանք 25 միավոր | Առարկայի յուրացում 50 միավոր | Ակտիվություն 15 միավոր |
|---|---|---|---|
| I մոդուլ | 15 միավոր | 30 միավոր | 7 միավոր |
| II մոդուլ | 10 միավոր | 20 միավոր | 8 միավոր |

Նշված պահանջները կատարելու դեպքում ինքնուրույն աշխատանքի հետ միասին «Մերսման հիմունքներ» առարկայից տրվում է 2 կրեդիտ:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԺԱՄԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- Ներածություն: Մերսումը որպես գիտություն, զարգացման պատմությունը: Մերսման առարկան, նպատակը և խնդիրները
- Մերսման տեսության մեջ և պրակտիկայում կիրառվող տերմինները
- Մերսման դասակարգումը: Մարզական և բուժական մերսում: Հիգիենիկ և կոսմետիկական մերսում
- Մերսման համակարգերը. դասական, շվեդական, ֆիննական, սեգմենտար, կետային և պերիոստալ համակարգեր
- Մերսման ֆիզիոլոգիական ներգործությունը օրգանիզմի վրա: Մերսման ֆիզիոլոգիական ներգործության ուղիները՝ մեխանիկական, հումորալ, նյարդառեֆլեկտոր
- Մերսման հիգիենիկ հիմունքները. Մերսման պայմաններն ու անհրաժեշտ միջոցները: Մերսողին և մերսվողին ներկայացվող պահանջները: Մերսման ճշտությունն ապահովող պայմանները, հակացուցումները
- Մերսման ձևերը /ընդհանուր, մասնակի և զույգերով/
- Մերսման մեթոդները /ձեռքով, ոտքով և սարքերով /գործիքներով//
- Մերսման հնարքների դասակարգումը: Մերսման հնարքների կատարման ընդհանուր սկզբունքները: Հիմնական հնարքների համառոտ բնութագիրը/
- Շփում
- Տրորում
- Ճմլում
- Թրթռում
- Հարվածային հնարքներ
- Ցնցում, թափահարում,
- Շարժումներ /ակտիվ և պասիվ/

## ԱԿՆԿԱԼՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՊԵՏՔ Է՝

Գիտենան՝

- մերսում առարկայի նպատակը և խնդիրները;
- մերսման դասակարգումը և համակարգերը;
- օրգանիզմի վրա մերսման ֆիզիոլոգիական ներգործության ուղիները;
- մերսման հիգիենիկ հիմունքները. մերսման պայմաններն ու անհրաժեշտ միջոցները, մերսողին ու մերսվողին ներկայացվող պահանջները, հակացուցումները;
- մերսման ձևերն ու մեթոդները;
- մերսման հնարքների դասակարգումը, համառոտ բնութագիրը, հնարքների կատարման ընդհանուր սկզբունքները;
- մերսման պրակտիկայում կիրառվող քսուքները:

Կարողանան՝

- պահպանել մերսման հիգիենիկ հիմունքները;
- ճիշտ գնահատել մերսվողի մաշկի գույնը, խոնավությունը, մկանների տոնուսը;
- ճիշտ ընտրել մերսման հնարքները՝ ելնելով մերսվողի /հիվանդի/ ընդհանուր վիճակից և հաշվի առնելով մերսման հակացուցումները;
- ճիշտ ընտրել մերսման սեանսում օգտագործվող քսուքը;
- խորությամբ ուսումնասիրել համապատասխան մասնագիտական գրականություն;
- պարտադիր մասնակցել մերսման գործնական պարապմունքներին

Տիրապետեն՝

- մերսման սեանսի անցկացման հիմնական սկզբունքներին;

- յուրաքանչյուր հնարքի ու դրա տարատեսակների կատարման ճիշտ տեխնիկային;
- ինքնամերսման մեթոդիկային;

## ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- գնահատման ձևեր՝ հարցում, ինքնուրույն աշխանքներ
- գնահատման ընթացակարգեր՝ ընթացիկ երկու ստուգումների արդյունքների միջինացում;
- գնահատման գործիքներ՝ յուրաքանչյուր ստուգման համար 20 միավորանոց սանդղակ և գիտելիքների, ակտիվության, ինքնուրույն աշխատանքների կատարման մակարդակ, հաճախումների բաղադրիչներ:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՅՈՒԹԵՐ և ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
   - տեսողականացման միջոցներ /պաստառներ/
   - մերսման թախտ
   - 2 չափսի գլանաբարձիկներ
   - փոշիներ, յուղեր, քսուքներ

2. ԲԱՇԽԻՉ ՆՅՈՒԹԵՐ
   - դասագրքեր
   - լրացուցիչ ուսումնական նյութեր

## ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Մերսումը, որպես գիտություն, զարգացման պատմությունը:

2. Մերսում առարկան, նպատակը և խնդիրները:
3. Մերսման տեսության և պրակտիկայում կիրառվող տերմինները:
4. Մերսման դասկարգումը:
5. Մարզական մերսում:
6. Բուժական մերսում:
7. Հիգիենիկ մերսում:
8. Կոսմետիկ մերսում:
9. Մարզական մերսում: Տեսակները:
10. Մերսման համակարգեր, դասական, շվեդական, ֆիննական:
11. Մերսման համակարգեր. սեգմենտար մերսում:
12. Կետային մերսում:
13. Մերսման ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա:
14. Մերսման հիգիենիկ հիմունքները:
15. Մերսողին և մերսվողին ներկայացվող պահանջները:
16. Մերսմանն համար անհրաժեշտ պայմաններն ու միջոցները:
17. Մերսման հակացուցվածությունը:
18. Մերսման ձևերը:
19. Ընդհանուր մերսում:
20. Մասնակի մերսում:
21. Մերսման տեսության և պրակտիկայում կիրառվող տերմինները:
22. Ինքնամերսում:
23. Մերսման մեթոդները:
24. Մերսում ձեռքով:
25. Մերսում ոտքով:
26. Մերսում  սարքավորումներով:
27. Մերսման հնարքների կատարման ընդհանուր սկզբունքները:
28. Մերսման հնարքները:
29. Շփում: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:

30. Սեղմում: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:
31. Ճմլում: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:
32. Տրորում: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:
33. Հարվածող հնարքներ: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:
34. Ցնցող հնարքներ: Ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա: Տեսակները:
35. Շարժումներ: Ակտիվ և պասիվ:
36. Թրթռում: Անընդհատ և ընդհատումներով:
37. Մարզական մերսման զուգորդումը բաղնիքի հետ:
38. Բաղնիքում մերսման ֆիզիոլոգիական ազդեցությունը օրգանիզմի վրա:
39. Քսուքների կիրառումը սպորտային և բուժական մերսման պրակտիկայում:
40. Մարզական մերսում, նախապատրաստական մերսում:
41. Մարզական մերսում, մարզումային մերսում:
42. Մարզական մերսում, վերականգնողական մերսում:
43. Մերսման հնարքների կիրառման հիմնական սկզբունքները:
44. Ձեռքով մերսման զուգակցումը սարքավորումների հետ:
45. Մերսման սենյակի կառուցվածքը:
46. Մերսման ազդեցությունը մաշկի վրա:
47. Մերսման ազդեցությունը սիրտ-անոթային համակարգի վրա:
48. Մերսման ազդեցությունը մկանա-կապանային համակարգի վրա:
49. Մերսման ազդեցությունը կենտրոնական նյարդային համակարգի վրա:
50. Մերսման ազդեցությունը ծայրամասային նյարդային համակարգի վրա:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Պողոսյան Մ.Մ. Մարզական մերսման տեսական հիմունքները: Ուս. ձեռնարկ ֆիզիկական կուլտուրայի հայկ. պետ. ինստիտուտի ուսանողների համար. Երևան, 1988
2. Դուլյան Հ.Է. Սպորտային մերսում: Մեթոդական ձեռնարկ. Երևան, 2004
3. Дубровский В.И. Энциклопедия массажа. М.: Молодая гвардия, 1998
4. Погосян М.М. Спортивный массаж. М. 1999
5. Погосян М.М. Лечебный массаж. М. 2002